Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
4 մարտի 2024 թվականի N 65-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի մարտի 6–ից

«Կես գին բոլորին, մինչև 15 000 ՀՀ դրամ բոնուս նոր հաճախորդներին» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 06.03.2024թ-ից 06.06.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված Visa Gold, Travel, Mastercard Gold տեսակի հիմնական քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում:
1.3 **Քարտատեր՝** Արշավի ընթացքում թողարկված Քարտի քարտապան:
1.4 **Idplus նվեր քարտ՝** Թվային նվեր քարտ, որը տրամադրվում է Idplus լոյալության հարթակի միջոցով և հնարավոր է օգտագործել Իդրամով վճարում ընդունող առևտրի/սպասարկման ավելի քան 20 000 կետերում:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 06.03.2024թ-ից 06.06.2024թ-ը ներառյալ պատվիրված Քարտերի առաջին տարվա սպասարկման վճարը կզեղչվի 50%-ով: Քարտերի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանված են համապատասխան Քարտերի տեղեկատվական ամփոփագրերով:

2.2 Արշավի շրջանակներում՝ 06.03.2024թ-ից մինչև 06.06.2024թ-ը, այն հաճախորդները, ովքեր Idram&IDBank հավելվածի, IDBanking.am կամ Banking.idram.am հարթակների միջոցով կսինքրոնացնեն Իդրամի և Բանկի հաշիվները, և 15 օրացույցային օրվա ընթացքում (սակայն ոչ ուշ, քան 06.06.2024թ-ը) կպատվիրեն Քարտ(եր) կստանան Idplus նվեր քարտ, որպես «Welcome» բոնուս հետևյալ տրամաբանությամբ.

- Visa Gold, Mastercard Gold քարտերի դեպքում՝ 5 000 ՀՀ դրամ (հարկումից հետո) արժեքով,
- Travel քարտերի դեպքում՝ 10 000 ՀՀ դրամ (հարկումից հետո) արժեքով,
- Մեկ հաճախորդի գծով Idplus նվեր քարտի առավելագույն արժեքը 15 000 ՀՀ դրամ է:

Նվեր քարտերը հնարավոր է օգտագործել մեկ տարվա ընթացքում Idplus հավելվածով QR վճարում կատարելու միջոցով:

2.3 Idplus նվեր քարտերը կտրամադրվեն մինչև 20.06.2024թ-ը:

2.4 Արշավը չի գործում հետևյալ դեպքերում.

- Ամսական սպասարկման վճարով թողարկվող Քարտերի դեպքում,
- Թղթային PIN կոդով թողարկվող Քարտերի դեպքում,
- Նախքան Արշավը գործող Քարտի վերաթողարկման/փոխարինման դեպքում,
- 04.03.2024թ-ից մինչև 06.06.2024թ-ը Քարտը փակելու և Արշավի ընթացքում միևնույն արժույթով նույն Քարտից պատվիրելու դեպքում, ինչպես նաև առանց գործող Քարտի փակման՝ միևնույն արժույթով 2-րդ Քարտը պատվիրելու դեպքում,
- Քարտեր, որոնք ունեն տրամադրման և սպասարկման ստանդարտ պայմաններից տարբերվող պայմաններ, օրինակ տրամադրվում են փաթեթային առաջարկի, առանձին կազմակերպությունների հետ առկա համագործակցության շրջանակներում կամ այլ նմանատիպ դեպքերում,
- Սույն փաստաթղթի 1.2 կետում սահմանված Քարտերից տարբերվող այլ Քարտերի դեպքում,
- Կից Քարտերի դեպքում:

2.5 50% զեղչը տարածվում է ցանկացած եղանակով (Idram&IDBank բջջային հավելված, IDBanking.am/Banking.idram.am հարթակներ, Բանկի մասնաճյուղեր, հեռախոսազանգերի կենտրոն, Բանկի կայքէջ) Քարտերի պատվերների դեպքում:

2.5 Քարտերի գործողության ավարտից հետո կամ Քարտերի գործողության ընթացքում փոխարինման/վերաթողարկման դեպքում գործելու է տվյալ քարտատեսակի համար այդ պահին Բանկում գործող սակագները:

2.7 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.8 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: